

այլ այն դպրոցական նախակրթութիւնը, որ ստացել եմ ես առաջ ու առաջ Ներսիսեան դպրոցում: Ես ամենին երկիւղ չունեմ որ հայ միջնակարգ դպրոցից աւարտող պատանին (գիւղացի լինի թէ քաղաքացի) մի օտար լեզու եւ հասկանալով, ձեռքից ու աչքից ձգէր իր մայրենի լեզուի երկասիրութիւնները և անձնատուր լինէր լոկ օտարինին:

Ս. Իէգ-Նազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 սեպտեմբերի

Քաջ գիտենալով «Journal d'Orient» լրագրի հայոց հարցի վերաբերեալ յօդուածներին նշանակութիւնը և թէ եւրոպացիք ինչպիսի յարգանքով պիտի վերաբերվեն դէպի իրանց աչքի առաջ դրված հարցը, ես պարտքս համարեցի դիմելու իմ ծանօթ ու անձնօթ անձինքներին, որպէս զի չը խնայեն իրանց լուսման յօդուած հայոց դասը պաշտպանող վիէննայի լրագրի: Ընդ ամին առաջարկում եմ նուիրատու պարոնների ցուցակը, որին և խնդրում եմ, յարգող խմբագիր, տեղ տաք ձեր պատուական «Մշակ» լրագրի համարներին մէկուս ի գիտութիւն նուիրատու անձանց:

Յովհաննէս Թումանյան 2 ռուբլի, Արամ Սահախանց 3 ռ., Աւետիք Արզումանեանց 2 ռ., Յովհաննէս Մելքումեանց 2 ռ., Աւետիս Ղարախանեանց 2 ռ., Ստեփան Ռափայելեանց 2 ռ., Յակովբ Ակոբեանց 50 կոպէկ, Յակովբ Յովսէփեան Ակոբեանց 1 ռ., Կարապետ Մըրըլեանց 2 ռ., Բագրատ Սարգս-Վորդեանց 1 ռ., Գրիգոր Սարգս-Վորդեանց 1 ռ., Նիկոլայոս Ղալուստեանց 1 ռ., Գէորգ Ռափայելեանց 3 ռ., Յովհաննէս Ռափայելեանց 1 ռ., Գէորգ Տէր-Աբրահամեանց 1 ռ., Յովհաննէս Նազարեանց 1 ռ., Բաղդաս Արուշանեանց 2 ռ., Գէորգ Մուրադեանց 1 ռ., Սողոմոն 1 ռ.:

Ընդամեն գումարն է 29 ռուբլ 50 կոպ, բարեհաճեցէք հասուցանելու ուր հարկն է:

Բաղդաս Արուշանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 12 սեպտեմբերի

Քացի այն միջոցից, որ պ. Աբր. Ամիրխանեանցը իմացել է Գօրի եղած ժամանակ շան կծածից ազատվելու համար («Մշակ» № 158), կայ է մի այլ միջոց, որ պարտաւորութիւն եմ համարում յայտնել լրագրութեամբ և դարձնել մեր բժիշկների ուշադրութիւնը դրա վրա:

Այս տարի մինչ ես գնացած էի ամարանոց իմ հայրենիք՝ Սանահին, մի գիւղացու չունը կատաղեց և յանկարծակի վրա ընկնելով կծեց իր տիրոջ: Մի քանի օրից յետոյ շան տիրոջ գլուխը սկսում է պտոյտ դալ, որ առաջին նըշանն է վնասվելու: Բացի իր տիրոջից վնասել էր մի քանի այլ մարդոց և երեք զոմէշի: Բոլոր վնասվածներին ազատեցին այսպէս: Դաշտերում տեղ տեղ մուգ մաւի փոքր ծաղիկների վրա ամառը և գարնանը նստած են լինում մի տեսակ փոքրիկ չալ գոյնով կենդանիք, որոց մեր գիւղացիք անուանում են ալաքըլունգ, (կարծեմ թուրքերէն բառ է): Վարդավառի օրը (գիւղացիների կարծիքով ուրիշ օր անկարելի է) առանց ոչոքի եւս խօսելու գիւղացին գնում է դաշտ, հասնում է այդ կենդանիքը և բերում տուն: Եթէ մարդ է վնասվածը այն ժամանակ այդ կենդանիքը չորացնում, մանրացնում են, ջրի հետ խառնած խմեցնում 2 կամ 3 օր օրական երեք անգամ: Իսկ եթէ անասուն է վնասվածը, կենդանին առանց մանրացնելու հացի մէջ փաթաթում և ուտեցնում են վերս յիշած եղանակով:

Սակայն չը պէտք է մոռանալ, որ այդ բոլորը հարկաւոր է անել շան կծելու օրից մինչև քառասուն երրորդ օրը, իսկ եթէ այդ ժամանակամիջոցը անցնի առանց հոգալու, այլ ես չէ կարելի ազատվել ալաքըլունգով: Այդ միջոցը ընդհանրացած է Լուու գաւառում, ուր հարկաւոր մարդիք ազատված են դրանով: Խորհուրդ կը տայինք մեր բժիշկներին հետազոտելու այդ միջոցը, քանի որ հեշտ է ձեռք բերել այդ կենդանիներից:

Հետաքրքիրը այն է, որ մի երկու անգամ խմելուց յետոյ մարդիք միգում են մէկ կամ

երկու անգամ արին: Թէ ինչիցն է այս, ես չեմ կարող ասել ոչինչ: Թող լուծեն մեր բժիշկները:

Իշխան Յ. Գ. Արզումանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ղարս, 6 սեպտեմբ.

Աղաքիւղով երեք հարիւր տասն և երեք ռուբլ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրին հասուցանելու և բաժանորդների ցուցակը, խոնարհաբար խնդրեմք տեղ տալ ձեր պատուական լրագրում բաժանորդների ազգանուններին: Փօստի ծախսը տուեցին Ս. Ղամադեանց և Ալէքսանդր Վարդանեանցը:

Խաչատուր Խանկեանց 8 ռ., Նուսրէ կապիտան Ս. Ղամադեանց 8 ռ., Եազօր Խուդաբանց 8 ռ., Սամսոն Պապաջանեանց 8 ռ., Աղէքսանդր Չընգաբեանց 4 ռ., Յարութիւն Երզնկեանց 4 ռ., Միրզոյեանց 4 ռ., Սարգիս Բաղդասարեանց 8 ռ., Պօղոս Գօնիմիկեանց 4 ռ., Մատթէոս Բաղդասեանց 4 ռ., Տիգրան Գողաթեանց 8 ռ., Թայրի-Բեանց և Անանիկեանց 8 ռ., Յովհաննէս Մուրադեանց 4 ռ., Պետրոս Յարութիւնեանց 8 ռ., Բաղդասար Ղօլթօրեանց 4 ռ., Զաքար Զան-փոլադեանց 8 ռ., Ղալուստ Մանուկեանց 4 ռ., Աղաքէզ Բաղդուղեանց 4 ռ., Սարիբէզ Մկրտումեանց 4 ռ., Գարիբէլ Յարութիւնեանց 4 ռ., Գրիգոր Սօրչիկեանց 4 ռ., Մէլքումեանց 8 ռ., Ս. Բէգլաշեանց 25 ռ., Աւետիս Միխիթարեանց 4 ռ., Տիգրան Բոտանջեանց 4 ռ., Սէլիանեանց 4 ռ., Աղէքսանդր Լալայեանց 4 ռ., Կիրակոս Վարթիկեանց 3 ռ., Գէորգ Խոսրովեանց 1 ռ., Սարգիս Մանուկեանց 1 ռ., Նիկոլայ Խաչատուրեանց 4 ռ., Յովհաննէս Մուրադեանց 8 ռ., Յարութիւն Մովսէսեանց 8 ռ., Արիստակէս Մըլիսեանց 8 ռ., Մարգար Օլթեցեանց 2 ռ., Նազարէթ Սարգսեանց 8 ռ., Մկրտիչ Նալբանդեանց 4 ռ., Յարութիւն Այվազեանց 8 ռ., Գէորգ Գրիգորեանց 4 ռ., Սահակ Գունեամարեանց 8 ռ., Աբիսոյիմ Ասլոբեանց 2 ռ., Աղէքսանդր Չալթիկեանց 4 ռ., Պետրոս Պետրոսեանց 8 ռ., Ղարապիւղեանց 4 ռ., Օհանյան Վարդապետիկեանց 4 ռ., Մէլք Պապիկեանց 2 ռ., Գրիգոր Դրաբեանց 8 ռ., Պօղոս Կարապետեանց 4 ռ., Գէորգ Ղալուստեանց 4 ռ., Յարութիւն Շահբասեանց 4 ռ., Կրասիմիրեանց 8 ռ., Գէորգ Աղնաւորեանց 4 ռ., Յովսէփ Մարջանեանց 4 ռ., Աղէքսանդր Վարդանեանց 4 ռ., Մկրտիչ Մելիքեանց 4 ռ., Համբարձում Բարտաշեանց 4 ռ., ալէքսանդրապօլի հայ ոմն 5 ռ.: Ընդամենն է 313 ռուբլ:

Ս. Ղամադեանց, Ե. Խուդաբանց

ՆԻՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Տպում ենք Ղարսից յօդուած վիէննայի լրագրի ուղարկած 313 ռուբլ գումարի նուիրողների ցուցակը, որ բացի 13 ռ., արդէն վաղուց հաշւած է ընդհանուր գումարի մէջ: Բացի սորանից Թիֆլիսից պ. Արուշանեանցի ձեռքով ստացանք յօդուած նոյն լրագրի 29 ռ. 50 կոպ.: Ուրեմն առաջվայ փողի հետ կանի 1068 ռ. 50 կ.:

Մեզ գրում են Քոնստանտինովսկի օր հնագիտական ժողովի գիտնականները, որոնք մի երկու օրով գնացին Քոնստանտինովսկի, շատ լաւ ընդունվեցան այդ քաղաքում: Հայոց հասարակութիւնը Քոնստանտինովսկիում մեծ պատաստութիւններ էր տեսել հայ գիտնականների համար, բայց դժբաղդակաւ պ. Էմին և Պատկանեան չը գնացին Քոնստանտինովսկի, չը հասարակութիւնն էլ մեծ փառքով ընդունեց հրէայ գիտնական խօլոսովին:

Շնորհակալութեամբ ստացանք պ. պրօֆէսոր Պատկանեանից «Revue critique Internationale» Ֆրանսիական հրատարակութեան № 2, որի մէջ կայ, ի միջի այլոց, և նոյն իսկ Պատկանեանի յօդուածը Ժուստի քիւրդ-ֆրանսիերէն բառարանի մասին:

Մեզ հեռագրում են Իգիթիֆ, որ վանի անգլիական հիւպատոս պ. Կլէյտօն եկել է Իգիթի և այս օրերս հասնելու է Թիֆլիս:

Վիէննայի «Journal d'Orient» լրագիրը իր 38 համարի մէջ հաղորդում է որ Կ. Պօլսի «Ջէրիդէի» Հաւաքիս թիւրք լրագիրը մասնել է Վիէննայի թիւրք թիւրք կառավարութեանը և

պահանջում է որ այդ լրագրին արգելվի մուտքը թիւրքաց հողի վրա, որովհետեւ նրա պաշտպանած հայոց խնդիրը վտանգաւոր է թիւրքիսի համար: «Ժուրնալ դ'Օրիան» մի սաստիկ յօդուածով պատասխանում է այդ մատնութեանը և ասում է որ այնու ամենայնիւ կը շարունակի պաշտպանել հայոց դատը: Այդ յօդուածը մինք կարտատպենք «Մշակի» մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Գամբետտա Գօնֆլէօրի մէջ մի նոր նաւահանգստի բացման առիթով արտասանեց հետեւեալ ճառը: «Ինչ ուզում են թող ասեն, որքան կամենում են ինձ բաժնասէն, միայն զուգ հաւատացած եղէք, որ այս րոպէին ձեզ հետ խօսող մարդը այլ նպատակ չունի, բացի ընդհանուր շահերի պաշտպանութիւնը: Մենք պարտաւոր ենք պաշտպանել մեր հայրենիքի շահերը, որին մենք պէտք է նուիրենք մեր աշխատանքները, եռանդը և որի համար պէտք է զոհենք մեր անձը: Տեսնելով, թէ գիւղական ազգաբնակչութիւնը ի՞նչպէս է վերաբերվում ոչ թէ մարդուն, այլ այն սկզբունքներին, որոնց նա ծառայում է, հանրապետութեանը, որ նա պաշտպանում է, կարելի է համարձակ ասել, որ Ֆրանսիայի համար նոր դարեւուր է սկսվում և որ իշխանութիւն ունեցող ժողովուրդը կարող է դէպի ինքը յարգանք ներշնչել թէ յաղթված կուսակցութիւնների մնացորդներին և թէ ամբողջ աշխարհին: Դրա համար երկու պայմաններ են հարկաւոր, որոնց երբեք պէտք չէ բաժանել. ամենամեծ հաստատամտութիւն նպատակին հասնելու համար և ամենամեծ զգուշութիւն միջոցներ զործադրելու ժամանակ: Բաժանելով այդ պայմանները, կարելի է պատահարներին ենթարկել և յաղթվել, իսկ խաղաղութեան ոգին հաստատամտութեան և խոհմութեան հետ միացնելով, բռնութիւնը գործ չը դնելով: այլ դիմելով մարդկերանց բանականութեանը, աշխարհի այդ իսկական թաղաւորին, կարելի է ամեն բանի հասնել: Ժողովրդի և նրա ընտրեալների մէջ համերաշխութիւնը ոյժ է հեղինակութիւն է կազմում, որովհետեւ այդ ընտրեալներին ժողովուրդն է նըշանակութիւն տուել: Բայց այդ չէ նշանակում, որ հարկաւոր է ենթարկվել ամբողջ րոպէական կապիդներին: Ընդհակառակը հարկաւոր է ժողովրդին միշտ ճշմարտութիւն ասել, հաւատացած լինելով, որ նրա խղճի խորքերի մէջ եղած բանականութեան և հայրենասիրութեան լոյսը կը ստիպէ նըշան հասկանալ, թէ ո՞վ է ճշմարիտ, արդար և իրաւացի: Յանուն այդ համերաշխութեան հաստատամտ լինենք, յուսանք և մենք ամեն բանի կը հասնենք:»

Նէյթլըդի մէջ Գամբետտա ասել է հետեւեալը. «1875 թուականին պարլամենտական և օրինաւոր ճանապարհով հաստատված հանրապետութիւնը կատարեց իր կոչման մի մասը, այսինքն հանրապետական կառավարութեան իշխանութիւնը անվիճելի դարձրեց ամբողջ Ֆրանսիայի մէջ: Այժմ, երբ այդ իշխանութիւնը հաստատված է երկրի մէջ և յարգված է օտար պետութիւններից, հանրապետութիւնը մի այլ գործ ունի, որ նրան յանձնել է երկրորդ, նա պէտք է կատարի իր պարտականութիւնները դէպի այն մարդիկ, որոնք նրան հաւատացել են, պէտք է մոցնի երկրի մէջ այն վերանորոգութիւնները, որոնց պահանջում է հասարակական կարծիքը: Անկարելի է ամեն բան մի անգամից կատարել: Իմ կար-

ծիքով, Ֆրանսիան չէ ցանկանում միանգամից բարձրացնել բոլոր հարցերը և նրանց մի անգամից վճռել: Երկիրը կամենում է, որ մենք առաջ մի հարց բարձրացնենք, նուիրենք նրան մեր բոլոր ուշադրութիւնը, ուսումնասիրենք նրան և այնուհետեւ վըճռենք: Ես խորհուրդ եմ տալիս այդ գործնական քաղաքականութեանը հետեւել: Իւրաքանչիւր օր պէտք է իր գործն ունենայ և ոչ թէ բոլոր գործերը միասին: Ինձ կասեն, որ այդպիսի քաղաքականութիւնը նեղ է, որ պէտք է ընդարձակ վերանորոգութիւններ մոցնել: Համաձայն եմ. բայց ես գիտեմ այնպիսի ժամանակ, երբ աշխատել են վերանորոգել աշխարհը հրովարտակներով և դրա համար շատ թուլթ են փչացրել իսկ դրանց հետեւանքը սարսափելի յետադիմութիւն է եղել: Ես հաւատացած եմ, որ երկրի ներկայացուցիչները Բուրբոնեան պալատի մէջ հաւաքվելուց յետոյ կասեն, թէ երկրին ի՞նչ է հարկաւոր, այս կասեն և ոչ թէ կը պահանջեն, որովհետեւ այժմեան կառավարութեանը բաւական է ասել, որ նա կատարէ: Պատգամաւորների ժողովի կամքի հետ ամենքը կը համաձայնվեն:»

ԲՕԼԳՈՐԻԱ

Բօլգարական պետական նոր խորհուրդը կազմված կը լինի 12 անդամներից, որոնցից չորսին պէտք է բօլգարական իշխանը նշանակէ: Ժանդարմների թիւը լինելու է 1,513: Սօֆիայից «Köln. Zeit.» լրագրին հաղորդում են, որ իշխան Ալէքսանդրի կառավարութեան բռնած ընթացքը անբաւականութիւն է յարուցանում: Շատերը գտնում են, որ նրանք սխալվել են, նոր կառավարութեան կարգապահութեան հաստատելու վրա յուսալով: Ամենքը դատապարտում են կառավարութեան նախկին միսիստը Յանկովին Սօֆիայից արտաքսելու համար: Ասում են, որ ի՞նչ նա մեղաւոր էր, պէտք էր նրան դատաստանի ենթարկել և ոչ թէ կամայականութեամբ արտաքսել Սօֆիայից: Կառավարութեան գործադրած միջոցները առհասարակ առիթ են տալիս մտածելու, որ նա իր գրութիւնը ապահով չէ համարում: Ճշմարիտ է բօլգարական իշխանը ընդհանուր ներուժն շնորհեց քաղաքական յանցաւորներին, բայց այդ ներուժն էլ կորցնում է իր նշանակութիւնը, քանի որ նա խստութեամբ պայմանաւորված է:

ԱՆԳԼԻԱ

Անգլիական լրագիրները յայտնում են հետեւեալ կարծիքները կայսրերի տեսակցութեան մասին Գանցիգի մէջ: «Standart» յայտնում է, որ այդ տեսակցութիւնը վտանգաւոր է Ֆրանսիայի և Կերմանիայի բարեկամական յարաբերութիւնների համար: «Times» լրագրի կարծիքով Գանցիգի տեսակցութեան ժամանակ վերականգնվեցաւ երեք կայսրերի դաշնակցութիւնը, որ բոլորովին վտանգաւոր չէ Անգլիայի համար: «Daily News» լրագիրը այդ տեսակցութիւնը վտանգաւոր չը համարելով, հրաժարվում է հաւատալ Ֆրանսիական լրագիրների հաղորդութիւններին, իբր թէ տեսակցութեան պատճառը միայն քաղաքականութիւնն էր:

Անգլիական լրագիրները աւելի համաձայնութեամբ են խօսում եգիպտական հարցի մասին: Բոլորի կարծիքով եգիպտական դժուարութիւնները կարող են վերջանալ միայն թիւրքաց գործերի միջամտութեամբ: Թեղիվի ոյժերի վրա անկարելի է յոյս դը-

71—150